Հովհաննես Թումանյան

Երազ

Գիշերն երազում հալածում էին.
Փախչում էի չար թշնամիներից.
Նրանք խառնաձայն հետևում էին...
Դողում էին սիրտս ու ծնկներս ահից:

Իմ առջև տեսա ընդարձակ դղյակ
Բարձրը պատերով փոքրիկ ծմակում.
Ես այնտեղ մտա... անմարդ ու դատարկ
Այն ավերակը ինձ հույս էր ազդում...

Զգույշ կուչ եկած, շունչս պահելով

Ես դողում էի մահվան սարսափից,
Եվ, զարհուրելի աղաղակներով,
Չարագործները մոտիկ էին ինձ:

Հանկարծ դղյակի, իմ շուրջ տարածված,
Գերեզմաններից ձայներ դուրս եկան,

Իմ հոգուն ծանոթ ձայներ մոռացված...
Եվ ես զորություն առա գերբնական:

Անարգ թաքստից դուրս թռա իսկույն
Որպես վրդոված վագրը դարանից,
Եվ հարձակվեցի ընդդեմ թշնամուն,

Ձենքերի բախում... զարթեցա քնից:

1892